# ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

## ՅԱՐԹՈՒՆ ՕՂԼՈՒ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՑ

*Իրանահայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ, իր ինքնատիպ ստեղծագործութիւններով առանձնայատուկ և պատուաւոր տեղ է գրաւում աշուղ Յարթուն Օղլին, որ ապրել եւ ստեղծագործել է 18րդ դարի վերջին եւ 19րդ դարի առաջին շրջանում, 1760–1840 թուականներ:*

*Նա մէկն է իր ժամանակի այն առաջնակարգ եւ փառաւոր աշուղներից, որ շրջել է Իրանի Սպահան նահանգի Փերիա, Չարմահալ, Բուրվարի, Քեամարա, Գեափլա, Քեազազ, Մալայիր գաւառների հայաբնակ եւ պարսկաբնակ գիւղերը եւ իր երգերով ու չօնգուրի նուագակցութեամբ առանձին փայլ է տուել գիւղական հանդէսներին, խնջոյքներին, հարսանիքներին եւ գեղջուկ ժողովրդի սրտում վառ է պահել աշուղական արուեստի սէրը, միաժամանակ նպաստել է խաւարում եւ յետամնացութեան մէջ ապրող գիւղացիների լուսաւորութեանը: Իսկ իր յօրինած հայերէն ու թրքերէն գանձալեղ եւ բազմազան երգերով հարստացրել է գուսանական գրականութեան գանձարանը: Այդ երգերից շատերն երկար ժամանակ հնչել են գեղջուկ ժողովրդի շրթների վրայ:*

*Հայ երաժշտական մշակոյթի պատմութեան մէջ եւս յատուկ տեղ են գրաւում Յարթուն Օղլու յօրինած երգերի ու տաղերի աշուղական եղանակները, որոնք իրենց գունագեղ երանգաւորումներով երաժշտական ուրոյն արժէք են ներկայացնում: Այդ սիրուն եղանակներով Յարթուն Օղլին ժողովրդի սրտում վառ է պահել աշուղական երաժշտութեան սէրը:*

*Աշուղն իր ստեղծումների համար եղանակներ յօրինելիս օգտուել է գլխաւորապէս արեւելեան երաժշտութիւնից, որ իր հերթեամբ կապուած է հայկական, իրանական եւ թրքական հին երաժշտութեան աւանդների հետ: Այդ սիրուն եղանակներից շատերը վաղուց մոռացուել են, որովհետեւ ժամանակին չեն ձայնագրուել: Պահպանուել են միայն որոշ եղանակներ, ինչպէս՝ դիվանի, գիւզալլամա, աշղլամա, դաստան, ղօշմա, ղազել, մուխամմազ, սեմայի եւ այլն, որոնք աշուղական երաժշտութեան արուեստի գեղեցիկ էջերն են կազմում:*

*Աշուղ Յարթուն Օղլու երեք ոտանաւորների՝ «Երգ մատանոյ», «Ղարիբ մարդս» եւ «Ես ումից չունի քեզանից» անուն եղանակները մոռացութեան կորստից փրկելու եւ հայ աշուղական երաժշտութեան գանձարանը հարստացնելու նպատակով՝ ժողովրդի շրթներից ձայնագրեցինք եւ առաջին անգամ հրատարակում ենք «Սիոն»-ում:*

### ԵՐԳ ՄԱՏԱՆՈՅ

Աղջի՛կ, եկ դու քո Աստուածն միտք բեր,
Նալլաթ[1] տուր սատանին, բեր իմ մատանին.
Ափսոս ես, մի՛ ըլնի սատանին ընկեր,
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին:

Քվերդ դուրս արիր, տուիր լացացրիր,
Կանիցս բռնեցիր, ձեռս բանձրացրիր,
Բերանիդ ջրովը մատս թացացրիր.
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին:

Ուզում աս ճշանն առեմ, տեսնես երնց[2] էն ը,
Դիրիր մատդ, տեսիր մատիցդ լէն ա.
Ասիր՝ կզգտիկցնեմ, հալա[3] թող կենայ,
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին:

Երէ կամենում էս դու ամուսնանաս,
Վատ մի՛ անել, որ իմ բերանն բանաս,
Ուզում էս որ կարմիր ֆօղրով հարսնանաս՝
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին:

1 *անէծք, նզովք:*

2 *հէնց:*

3 *դեռ, առժամին:*

digitised by A.R.A.R.@

Մի՛ տանիլ աշղի անէծքը, վատ ա,
Թէ քեզ նշանեն, մատանին շատ ա.
Թէ մէրդ իմացել ա, քեզ կ'կտրատայ,
Նալլար տուր սատանին, քեր իմ մատանին:

Երէ՞ քու ծծածը լէվ հալալ[4] կար ա,
Մի՛ անել այդ բանը, քեզ դարախար ա.
Ակն փիրուզ ա, օղն արծաթ ա,
Նալլար տուր սատանին, քեր իմ մատանին:

## ԵՐԳ ՄԱՏԱՆՈՑ



Ես Ցարթուն Օղլին ամ, չասես յուրէշ ամ,
Թամամ աշխարհի ման ամ գալիս, դարվիշ ամ.
Ինչ մէջլիսում[5] որ նստեմ, անունդ կ'յիշեմ,
Նալլար տուր սատանին, քեր իմ մատանին*:

---

## Ղ Ա Ր Ի Բ Մ Ա Ր Դ Ս

Ղարիբ մարդս՝ ղարիբ ղուրբաթ[1] աշխարհի
Վաթանից[2] թառ ընկած դշի[3] նման է.
Տակն դուխ[4] փոխս, առաջն քարի.
Դոշ[5] բլբուլն թռնէր՝ փշի նման է:

Ղարիբ մարդս՝ երէ ծաղկած ծառ էլնեն,
Մաջլիսներում[6] կանրեղի պէս վառ էլնեն,
Գոհիքն թրմաշալ[7] ու կապէն զառ[8] էլնեն,
Դրա համար ճանդած քաշի նման է:

4 արդար, հարազատ:

5 խնջոյք, հանդէս, ժողով:

* Մի անգամ Ցարթուն Օղլին հարսանիք է հրաւիրուում Փերիա գաւառի Հայաբշերի գիւղում նուագելու համար: Նա երկար նուագելուց եւ երգելուց յետոյ, գիշերն առանձնանում է մի սենեակում քնելու: Կէս ժամ անց մի աղջիկ կամաց դուռը բանալով ներս է մտնում. Թէեւ Ցարթուն Օղլին զարթուն է լինում, բայց իրեն քնած է ձեւացնում, որպէսզի հասկանայ աղջկայ մտադրութիւնը: Գեղջկուհին նրա մատից փիրուզ մատանին, որը Սուլէյման խանն է նուիրած լինում, հանելով դուրս է գնում: Աշուղն ոչինչ չի խօսում: Հետեւեալ օրը կերուխումի ժամանակ, երբ հանդիսականները խնդրում են աշուղից մի բան երգել, նա ձեռք առնելով չոնգուրը, յանպատրաստ երգում է յիշեալ տաղը:

1 օտարութիւն:

2 հայրենիք, ծննդավայր:

3 թռչուն, արծիւ:

4 բմբուլ, բարակ փետուր:

5 ինչպէս:

6 խնջոյք, հանդէս:

7 նրբագործ շալ, ցփոխ:

8 ոսկեթել:

digitised by A.R.A.R.@

Ղարիբ մարդս՝ երէ որդւոյ տեղ սիրես,
Ախիրն մին խօսքով իւր սիրտն կերես.
Երէ մօրդ[9] ու մուսամբա[10] առաջն բերես,
Դրա համար հարամ[11] լաշի[12] նման է:

Ղարիբ մարդս՝ նստած այնաֆ[13] օրախին[14],
Դոր նօքարն[15] խըմար[16] անէր իւր աղին.
Իւր առաջն խաղալ, խնդալ ու ծիծաղել,
Դրա համար մի դարդաշի[17] նման է:

## ՂԱՐԻԲ ՄԱՐԴՍ



Ղարիբ մարդուս՝ սիրտն քանդած աւեր է,
Առէշխուռն գետեր, ծովեր, նաւեր է.
Ճարբուռն օղլին մէջլիսներում դավեր է.
Դրա համար դոր մի քաշի նման է:

## ԵՍ ՈՒՄԻԴ ՉՈՒՆԻ

Ես ումիդ[1] չունիմ քեզանից,
Որ ինձնէ չըշար[2] ըլնէիր.
Խարիբչամ ի յամէն բանից,
Իր դարդերիս ճար ըլնէիր:

Իմ չարդիս ճար կարող էիր,
Անզին ջովհարիր[3] փող էիր.
Դո՞ւր իր ուզում ինձ թողէիր,
Դու իրուշին հար ըլնէիր:

Ես իմ քո ջովհարիր հալլդ[4].
Գցիր սինիդ[5], կապիր կուլդ[6].
Դու դո՞ր իր բողում բլբուլդ՝
Ալուանին համփար[7] ըլնէիր:

Չեմ կուշտացել ջամալիցդ[8],
Իլլահ[9] էդ բարի հալիցդ[10].
Չի աւատում քեամալիցդ՝[11]
Էդքան անկատար ըլնէիր:

9 հաւ:
10 թուշուն, որ շատ համեղ միս ունի:
11 ազօրինի, անմաքուր:
12 դիակ, դէշ:
13 հայելի, պարզ:
14 սենեակ:
15 ծառայ, սպասաւոր:
16 ծառայութիւն:
17 թամբաւել:

1 յոյս:
2 ձանձրանալ, յոգնել:
3 գոհար:
4 յուլունք:
5 կուրծք, լանջ:
6 վիզ:
7 զարթակից, պաշտպանակից:
8 դէմք, կերպարանք:
9 Նամանաւանդ:
10 դրութիւն, վիճակ:
11 խելք, հասկացողութիւն:

## ԵՍ ՈՒՄԻԴ ՉՈՒՆԻ



Ցարթուն օղլուս խօսկն բռնացիր,
Քո իգրարի[12] վերէն կացիր.
Դոստ[13] ու դուշմանդ[14] յիմացիր,
Չի պէտք ա յիմար ըլնէիր:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

12 խոստումն, պայման:
13 բարեկամ:
14 թշնամի: